ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 21.01.2019թ. հ.01/37Մ գրության՝ տեղեկացվում է.

Ներկայումս Երևան քաղաքում գործում են գյուղատնտեսական արտադրանքի 24 շուկա, որտեղ կա մոտ 1545 ազատ վաճառատեղ: Երևանի քաղաքապետարանը շուկաների տնօրենների հետ ձեռք է բերել պայմանավորվածություն՝ բացօթյա ապօրինի առևտուր իրականացրած քաղաքացիներին արտոնյալ պայմաններով վաճառատեղեր տրամադրելու համար: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչությունը վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի հետ համատեղ բացօթյա ապօրինի առևտուր իրականացրած քաղաքացիների առաջարկությամբ ուսումնասիրում և քննարկում է Երևան քաղաքի տարբեր հատվածներում նոր գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ շուկաններ կազմակերպելու հնարավորությունները: Գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ շուկաներ կազմակերպելու վերաբերյալ ներկայացված առաջարկները քննարկելու համար անհրաժեշտ է ներկայացնել նախատեսվող շուկաների էսքիզային տարբերակները և տարածքների ճշգրտված տեղագրական հանույթները (հետիոտնային հատվածի փաստացի չափերը ներառյալ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ